



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
 «ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ» ՓԲԸ
 МИНИСТЕРСТВО ЭКОНОМИКИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
 ЗАО «НАЦИОНАЛЬНЫЙ ОРГАН ПО СТАНДАРТИЗАЦИИ И МЕТРОЛОГИИ»
 MINISTRY OF ECONOMY OF THE REPUBLIC OF ARMENIA
 «NATIONAL BODY FOR STANDARDS AND METROLOGY» CJSC



« 29 » *Տեպրեմբ* 2023թ. *ՎՋՆԵՐ 472*

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ
 ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ
 ՊԱՐՈՆ ՆԱՐԵԿ ՏԵՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տերյան,

Ձեզ ենք ներկայացնում «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲ ընկերության և ՀՀ էկոնոմիկայի նախարարության միջև 2023թ.-ի մարտի 24-ին կնքված «Անտենային էտալոնների պահպանման և զարգացման ծառայությունների» մատուցման պետական գնման պայմանագրի (ՀՀ ԷՆ-ՄԱԾՁԲ 72-23) համաձայն 2023թ.-ի 1-ին եռամսյակի Հաշվետվությունը:

Առդիր՝ 2 թերթ:

Հարգանքով՝
 Տնօրեն

Ժամանակավոր պաշտոնակատար

ԱԼԲԵՐՏ ԲԱԲԱՅԱՆ

Կատարող՝
 Գ. Հակոբջանյան
 Հեռ. (010)232600 (155)

Մասնագիտացված կազմակերպությունների կողմից «Անտենային էտալոնների պահպանման և զարգացման ծառայությունների» մատուցման պետական գնման պայմանագրի (<< ԷՆ-ՄԱԾՁԲ 72-23) համաձայն՝ «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲ ընկերությունում 2023թ. առաջին եռամսյակում կատարված աշխատանքների

Հաշվետվություն

1. Կազմվել է 2023 թվականին նախատեսվող անհրաժեշտ աշխատանքների ցանկ և օրացույցային պլան, որը հաստատվել է «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲ ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար պարոն Ա. Բաբայանի կողմից:

2. Կատարվել է ԷԻՍ-1 էտալոնային համալիրի (ԳԷՊԻ-0.25, ԳԷՊԻ-0.5 և ԳԷՊԻ-1) շարժական սայլակի արագ արգելակման մեխանիզմի վնասված էլետրահիդրավլիկ մոլիչի փոխարինում նոր ձեռքբերված էլետրահիդրավլիկ մոլիչով, ինչպես նաև փորձարկում:

3. Ստուգվել են շարժական սայլակի շարժիչի եռաֆազ էլեկտրական լարման սնուցման փուլերի հերթականությունը և տեղափոխումն ապահովող հիմնական և շարժական վահանակների աշխատանքը:

4. Լաբորատոր պայմաններում ստուգվել են ԷԻՍ-1 (ԳԷՊԻ-0.25, ԳԷՊԻ-0.5 և ԳԷՊԻ-1) և ԷԻՍ-2 (ԳԷՊԻ-2) համալիրների լոգարիթմական և նախնական ուժեղացուցչի աշխատունակությունը, համալիրներում էլեկտրական ցանցի կոնդուկտիվ աղմուկների նվազեցման նպատակով նոր ձեռքբերված ցանցային ֆիլտրերը և լարման կարգավորիչները:

5. Լաբորատոր պայմաններում ստուգվել է ԳԷՊԻ-2 էտալոնային համալիրի պտտման հարթակի ավտոմատ կառավարման բլոկը:

6. Նախագծվել է վթարային պայմաններում (էլեկտրական սնուցման անջատում) չափանմուշները պահպանման սրահ վերադարձնելու համար հոսանքի ներքին այրման շարժիչ-գեներատորի միացման հնարավոր տարբերակը:

7. Կատարվել են ԷԻՍ-1 չափանմուշային համալիրի օժանդակ սենյակների մաքրման և կարգավորման աշխատանքներ:

8. Ուսումնասիրվել, հաշվարկվել և նախնական գծագրվել են ԳԷՊԻ-0.5 և ԳԷՊԻ-1 չափանմուշների 26,5 - 40 ԳՀg (8մմ ալիքի երկարության) հաճախականային տիրույթի նոր ռուպորային ճառագայթիչների ամրացման և տեղադրման սարքավորումները:


9. Հաշվարկվել է ԳԷՊԻ-1 չափանմուշի փուլային կենտրոնի դիրքը՝ ըստ ԳԷՊԻ-1 չափանմուշի 26,5 – 40 ԳՀց հաճախականային տիրույթի նոր ռուպորային ճառագայթի ամրացման սարքավորման նախնական գծագրի:

«Ստանդարտացման և
չափագիտության
ազգային մարմին» ՓԲԸ-ի
տնօրենի տեղակալ՝



ԱՐՄԵՆ ՈՍԿԱՆՅԱՆ

Էտալոնների պահպանման
գիտական բաժնի պետ՝



ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈՒԶԱՆՅԱՆ